

Ռ Ա Զ Մ Ա Կ Ա Ն

Ա.

ՄԱՐՏԵՐԳ

Արշալոյսին՝ երբ երկինքն հորիզոնէն կը բանար
Գեղաժիծաղ առաւօտն աշնանային օրերուն,
Գոռա՛ց հիւսիսն ահաւոր մարտի պատգամն անարդար,
Վառ դոյներուն խառնելով հրանիւթ փոշին գէնքերուն:
Քաղաքներէն դէպի դաշտ եւ դաշտերէն աւաններ
Ծովածաւալ կ'երկարէր, փողին ձայնին հրապտակ՝
Գերման հսկայ զօրութիւնն, աւար դրկած կամ ըստուեր.
Բայց սիրահար միշտ փառքի՝ յաղթ լանջքերով, խեղ, անյաղ:

Ինչպէս մըրիկն ուժգնակի կը թաւալի լեռներէն՝
Բանակներու ալիքներն ահեղամըռունջ յորդեցան,
Երկիրներու սահմաններն աւերելով ուժգնօրէն,
Ու սփռելով նախճիրներ ցաւի, մահուան ցիրուցան:
Եւ կամ ինչպէս որ հրդեհ կը ճարակէ անտառներ՝
Գոռող վաշտերն այնպէս՝ հուր աչքով զինուած մոլեղին,
Խաղաղ ափերն առաթուր կոխոտեցին անըմբեր,
Այրելով ծովն հասկերու խարտիչահեր ծրփանքին:

Ինկաւ հերոս լեհաստանն ու մոխրացան հին փառքեր,
Ինկաւ Թլաման ցեղն ազնիւ, ովկէանին մէջ արիւնին.
Ինկաւ անլուր պարտութեամբ եւ գոռ Թրանսան ռազմասէր,
Անգոր, անդէկ քայքայուած, զոհ իր ներքին պայքարին:
Ռէման այրեցաւ, ցնցուեցաւ եւ մայր Ոստանը լոյսին,
Նափուլէոնն հեծեց լո՛ւռ, իր դամբանէն սըղաւոր,
Ապշեցաւ Թօն ի տես այդ յաղթանակին դիւրադին,
Ու քերթողները լացին սուղը դրօշին փառաւոր:

Մըրիկն ահեղ մարտագոռ վարդեց դարձեալ հըրաչուի.
Խառն ափերն ու հեղին եւ ափրիկեան սահմաններ՝
Հիաղարհուր ալլալած, մըռան ցանցին մէջ բոցի.
Երկնքի վրայ շողաց սուր, խաւար առին լոյս աստղեր:

Հեղեղին տակ սահմըռկած ռազմադըրդը արշաւին՝
Ժողովուրդներ ողբացին կորուստ ու մահ բիւրաւոր,
Ու սարսափէն մահաափիւռ օղաչու կոյր թռչունին,
Ընդերքն երկրի սուղուեցան՝ բանտարկեալներ կամաւոր:

Միջերկրական ջուրերէն ծընաւ քինոտ թշնամին,
Որ Ապենին լեռներէն մագըլցելով քալեց վեր
Քանդելու սէդ խրոխտութիւնն Մուսսոլինեան Հռոմին,
Իր անցքին վրայ ցանելով սարսուռ ու մահ կարեւելէր:
Մըռաւ, դրաւեց սիրտն խառն քաղմահանձար նուրբ ցեղին,
Ի պատուհաս դաշինքին զոր ան կռեց ահամայ
Հիւսիսարեւել մարտիկին հետ, իբր ընկեր իր գէնքին,
Երբ դաւաճանն Ալալիոն դայն խեղդել կ'ուզէր սովամահ:

Մոլեգնաչունջ ալիքներն հորդան կու տան արեւելք
Ընդդէմ Ռուսին ահարկու եւ հսկաներ կը բախին.
Երկիրն հուժկու հարուածէն կը սասանի զերդ եղեղ,
Ու վերէն տիւ ու գիշեր հուր կը ցանուի տօթադին:
Փայլահնացայտ շողիւններ մերկ սուրերու առաջէկ
Անխընայ կեանք կը հնձեն իբրեւ գաղան մարդախանձ.
Թնդանթներ անարդիլ կը ցնցեն վայրն ահարեկ,
Կ'իյնան կործան ու թաւալ ապարանքներ մեծադանձ:

Նըման հրեղէն սիւներու վաշտերն անդուլ կ'արշաւեն,
Տարաստաններ կ'աղմըկին ու քաղաքներ բոցավառ
Երկինքն ի վեր կը դռնեն ատելութեան խօսքն անդէն,
Ու կը լըռեն սարսափի ներքեւ թաղուած ոգեւար:
Շանթի հարուած՝ արշաւն այն ահեղաթափ հեղեղին,
Որ չի ճանչնար խոչընդոտ եւ խեղճութեան ամբարտակ,
Ու կը հեզնէ ցաւն, փոխան արցունքներու բարբառին:
Աստուածացումն ո՛հ Ուժին, մարմնի խուժուժ յաղթանակ:

Վըրէժի խօլ ցասումէն մըղուած բանակը գերման,
Կը հնչէ փող նահանջի ոռոտական հողերէն.
Քանդո՛ւմ, գերփո՛ւմ կրկնակի կ'ահարեկեն ու մահուա՛ն
Քրքիջն անհոգ սրտերէն ներս թափելով կը վազեն:
Դարձ ահաւո՛ր, խորտակո՛ւմ... կարթակոտոր կը սպառի
Բրուսիական սարքը ռազմիկ՝ ճակատներու վրայ անթիւ...
Առիւծն հիմա ինկած է տաղնապի մէջ օրհասի,
Որ իր եսին հետ կատղած կը մաքառի դօտեկոխ:

Պերլին թիրախն արդ վրէժին եւ դժոխային յարձակման
Ոսոխներու՝ ճակատէն ու կռնակէն հարուածող.

Ամէ՛ն դիշեր ահազանդ... քաղաքն ողջոյն՝ որս կիզման
Օղաթընիչ ումբերուն, կը մըռնչէ սրտազող
Խաւարին մէջ փաթթըւած եւ զայրոյթն իր կըծելով:
Սարսո՛ւռ, փախո՛ւստ խելայեղ եւ ջղադրդիւ վայնասուն,
Թէեւ չափուած սաստի տակ, բայց կը պոռթկան որոտով,
Ու դըժոխք մ' հոն կը բացուի տենդազալար եռնփուն:

Տընքե՛րքն ահա՛, արհաւի՛րք, նախճիր անլուր մոլեղին,
Ռմբակոծո՛ւմ հիմնաքանդ, կայծակնահա՛ւր հրդեհում,
Հընոց անչէ՛ջ՝ ուր կ'այրի մարդն ու բնութիւն զայրադին,
Գալարումով ջերմաջերմ վայրադ կըքի ապառու՛մ:
Խաւա՛ր ու մա՛հ, կոտորա՛ծ... դաշտերու վրայ լայնարձակ,
Ահա հեծող մարմիններ, դառնակոշկո՛ճ խորտակուած,
Յաղթ իրաններ կոտափնատ, խանձած բոլորն ու խառնակ,
Երկաթներ դիտապատ, դէնք ու զըրահ փըշըրւած:

Մահուան ուղին կ'երկարի Տընքերքէն մինչ ի Պերլին,
Ստալինկրատէն, Մոսկուայէն մինչեւ պալատն ամպարիշտ
Հսկայական խոհանքին, որ վրդովեց սարսաղին
Ժողովուրդներն ողջակէզ հրկիղումով խօշաչօինդ:
Ինկա՛ւ դոռող Բարեւոնն աշխարհակալ Հիթլերին,
Ու ինքն անհետ հրայրեաց... թողած ետին աւերակ,
Որուն վրայ աղաւաններ կը կըռնչեն խնդադին,
Եւ լուռ Գիշեր կը հսկէ սիրած պատանք մահերդակ:

Բ.

ԵՐԳ ԽԱՂԱՂՈՒԹԵԱՆ

Խորտակուեցա՛ւ թեւն հուժկու սէզ Արծիւին դերմանիկ
Հակեց կուրծքին տակ դըլուխն որ դալարեց կողկողիկ՝
Աշխարհն, մոխի՛ր ափին մէջ.

Ի՛նչ ծաղիկներ խամրեցան դիւակընին իր շունչէն,
Ո՛րքան կեանքեր թարմադեղ արչալոյսին կարօտէն
Երազն ըրին սուգ անվերջ:

Հնչե՛ց ուժդին, վճռակա՛ն, արծաթ շեփորն յաղթութեան,
Ու մարդ դայլերն անտառին խորն շպարեցին անվարան.

Բայց հասած էր մահն արդար,
Որ հարուածով մը վերջին ըզդեռնեց հուսկ անխընայ
Ոճրագործներն համօրէն տապատ փրօւած դաշտին վրայ,
Փոշեթաւա՛լ, ողեսպառ:

Կը զողանջե՛ն զանգակներն հանդիսաւոր, տօնական,
Կ'երգեն իրենց նուազն հրգօր, անդորրաբեր, զուարթաճայն,
Որոնց հուժկու ալիքներ
Կ'երթան անմեռ բախելու սեմին վրայ նոր կեանքին,
Իբր արձագանգ մեր ցաւին եւ իբր հրաւէր կաթողին
Նոր օրերու լուսահեր:

Փողոցներէ՛ն լուսերանդ, փողոցներէ՛ն դրօշագարդ,
Գետերու պէս յորդաղեղ կ'անցնի թափօրը հրպարտ
Ապաղայի սերունդին.
Ծերունիներ արցունքով եւ խնդութեամբ պատարուն՝
Կը դիտեն ա՛նցքը կառքին գալիք լուսեղ դարերուն,
Մոռնալով ցաւն անցեալին:

Ատելութեան ամպերէն արեւ մ'ահա նորածաղ
Պայծառաբեր կը նայի սուգերուն վրայ աւերակ,
Ժպիտ ու խինդ սըփունով.
Երգ մը սիրոյ կը ծորի վշտազալար սրտերէն,
Ուաչքերուն մէջ կը ծաղկի յոյսի վառ ջահն հըրեղէն,
Կախուած վերէն նուրբ լարով:

Խաղաղութիւնն է իջեր բալասանի պէս անդին,
Խաղաղութիւն սրտերու մէջ, ուր մըրիկն էր կըքին,
Սանձակոտո՛ր, աւերի՛չ.
Սիրոյ շունչով մեղմասոյլ մեր շուրջն անվերջ կը յածի
Աւետարեր զըլարթունն՝ ակնարկն ուղղած աշխարհի,
Մեր ցաւերուն ամօքիչ:

Ո՛հ, ի՛նչ պայքար էր, պայքար դադափարին եւ նիւթին,
Ծընունդ նախկին շրջանի մը ահաւոր նեխանքին,
Եւ պատուհաս չարաղէտ.
Որ պղծելով վըճիտ ակն խմաստութեան մարդկային
Գործեց աւեր չարաշուք եւ հրդեհեց լոյս բանին
Արդարութիւնն առ յաւէտ:

Սուրէն, հուրէն մաղապուր աշխարհ մը կայ նահատակ,
Սրտեր ովկեան արիւնի, ցաւի անդունդ անյատակ
Կարօտ գըթած բաղուկի.
Ո՛վ Բարեգութ, չըլլա՛յ մահը սեւ պատանք տրտմասուզ,
Այլ արչալոյս մը սիրոյ յաղթանակին մեծաշուք՝
Մոխրակոյտին վրայ փառքի:

14 Մայիս 1945

Հ. Մ. ՃԱՆԱՇԵԱՆ